Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. փետրվարի 25-ի թիվ 40-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս 3

2. Ամփոփագիր 4

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ 4

4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ 4

5. Խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ. 16

6. Առաջարկություններ 19

1. Ներածական մաս

Հաշվեքննության հիմքը	2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 189-Ա որոշման հիման վրա (հաշվեքննությունը կասեցվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 205-Ա որոշման հիման վրա, և վերսկսվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ա որոշման հիման վրա)
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն
Հաշվեքննության առարկայի չափանիշները	
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020թ. նոյեմբերի 27-ից մինչև 2021թ. փետրվարի 22-ը ներառյալ՝ հաշվեքննությունը կասեցվել է 2020թ. դեկտեմբերի 3-ի թիվ 205-Ա որոշմամբ, և վերսկսվել է 2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ա որոշմամբ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. Ամփոփագիր

Առկա է խեղաթյուրում ստացված տեղեկատվության և ոչ ֆինանսական ցուցանիշներում արտացոլված շահառուների թվաքանակների միջև:

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն:

Հայտնաբերված խեղաթյուրումների ցանկ

Հ/Հ	Միջոցառման հոդված	Միջոցառման անվանում	Շահառուներ, ըստ ստացված տեղեկատվության	Շահառուներ, ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների
1.	1102-12003	Աշխատանքային կենսաթոշակներ	470,876	449,734

4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները

ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ ՍԱԾ) ՀՀ 2020թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է 483,178,466.85 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը 521,206,161.58 հազ. դրամ: Ինն ամիսների պլանը կազմել է 362,680,831.44 հազ. դրամ, ինն ամիսների ճշտված պլանը՝ 409,809,298.07 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի համար փաստը կազմել է 394,657,825.92 հազ. դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում փաստը կազմել է 330,638,345.9 հազ. դրամ, հաշվետու տարվա ինն ամիսների փաստը ավելացել է 19.4%-ի չափով:

Նշանակալի հաշիվներ են ընտրվել ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ (1011-12001՝ 22,721,335.47 հազ.դրամ), սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովություն (1102-12001՝ 23,261,590.1 հազ.դրամ), աշխատանքային

կենսաթոշակների ապահովություն (1102-12003՝ 179,019,695.7 հազ.դրամ), ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների ապահովություն (1205-12001՝ 17,504,143.9 հազ.դրամ), կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի ապահովություն (1205-12002՝ 3,784,271.1 հազ.դրամ), ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցության ապահովություն (1225՝ 25,706,016.2 հազ. դրամ) ծրագրերը: Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումները ներկայացված են ստորև:

Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներ

Աղյուսակ 1

	Ծրագիր/միջոցառում	Գումար, հազ.դրամ
1011	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն՝ այդ թվում	23,575,100.16
1011-11001	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում	200,687.93
1011-12001	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ	22,721,335.47
1102	Կենսաթոշակային ապահովություն՝ այդ թվում	264,556,793.9
1102-11001	Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում	36,172.52
1102-11002	Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովում	952,346.85
1102-12001	Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	23,261,590.13
1102-12002	Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ	447,677.72
1102-12003	Աշխատանքային կենսաթոշակներ	179,019,695.7
1102-12004	ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ	2,126,541.77
1205	Սոցիալական ապահովություն՝ այդ թվում	28,062,255.01
1205-12001	Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ	17504143.92
1205-12002	Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ	3784271.11
1205-12004	Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին	73600
1205-12005	Աջակցություն զոհվածների ընտանիքներին	248100
1205-12007	ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական	2551.7

	անձնակազմին սոցիալական աջակցություն	
1225	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն՝ այդ թվում	25,706,016.21
1225-12001	Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցություն	181,300
1225-12002	Կորոնավիրուսի (COVID-19)հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	291.5
1225-12003	Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում)	505,784
1225-12004	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց (Կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում)	940,189.5
1225-12007	Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 50-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 11 միջոցառում)	786,219.3
1225-12008	Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 30-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 12 միջոցառում)	1,842,928.67
1225-12009	Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխ. շուկ. գոյացած դժվ. արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլ. էներգիայի և խմելու ջրի դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցություն (Կորոն. տնտ. հետ. չեզոքացման 16 միջ.)	2,145,656.43
1225-12010	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19)տարածման հետևանքով մանավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառում)	8,968,780.17
1225-12011	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառում)	4,747,227.89

1225-12012	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած սոցիալապես անապահով ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներեքերորդ միջոցառում)	1,207,800.4
1225-12013	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին, քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառում)	3,045,108
1225-12014	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խմշնդիրների առջև կանգնած Հի քաղաքացիներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներկուերորդ միջոցառում)	338,504

Անապահով սոցիալական խմբերին աջակցություն ծրագրի ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է 89,125 շահառուի տրամադրվեր 22,876,218.58 հազ. դրամ գումար: Ինն ամսվա ընթացքում փաստացի ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների 22,721,335.47 հազ. դրամ գումար տրամադրվել է 90,710 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածում պլանավորվածից 154,883.11 հազ. դրամ պակաս տրամադրելը պայմանավորված է հայտ-պահանջի նվազմամբ, իսկ 1,585-ով շահառուների թվաքանակի ավելացումը՝ ճշտված բյուջեով նպաստառուների թվաքանակի նվազ լինելը փաստացիի նկատմամբ պայմանավորված է 9 ամսվա միջին նպաստ -ամիսների քանակով:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է 33,646 շահառուի տրամադրվեր 23,311,007.66 հազ. դրամ գումար: Ինն ամսվա ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների 23,261,590.13 հազ. դրամ գումար տրամադրվել է 31,996 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածում պլանավորվածից 49,417.53 հազ. դրամ պակաս տրամադրելը և 1,650-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների 9 ամսվա միջին թվաքանակով, իսկ ճշտված բյուջեի նկատմամբ տարբերությունը պայմանավորված է իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուներին վճարված կենսաթոշակ ամիսների քանակով:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակում աշխատանքային կենսաթոշակները ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 467,461 շահառուի՝ 182,773,514.4 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 449,734

շահառուի տրամադրվել է 179,019,695.7 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 3,753,818.7 հազ. դրամ պակաս տրամադրելը պայմանավորված է իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների հանրապետությունից բացակայելու հանգամանքով, իսկ 17,727-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների 9 ամսվա միջին թվաքանակով:

Սոցիալական ապահովություն ծրագրի ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների տրամադրման միջոցառման շրջանակում ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է 18,576,194.08 հազ. դրամ տրամադրվեր 67,087 շահառուի: Ինն ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 17,504,143.92 հազ. դրամ 70,933 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 1,072,050.16 հազ. դրամ պակաս տրամադրելը և 3,846 -ով ավել շահառուների պայմանավորված է իրավունք ձեռք բերած նպաստառուների թվաքանակի աճով, իսկ գումարային տարբերությունը պայմանավորված է տարեկան բյուջեի եռամսյակային համամասնություններով 9 ամսվա պլանը՝ 90 տոկոս, իսկ 4-րդ եռամսյակում 10 տոկոս սահմանելու հանգամանքով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստների տրամադրման միջոցառման շրջանակում ըստ առաջին ինն ամիսների ճշտված պլանի պետք է 4,038,560 հազ. դրամ տրամադրվեր 18,918 շահառուի: Ինն ամիսերի ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 3,784,271.11 հազ. դրամ 18,531 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 254,288.89 հազ. դրամ պակաս տրամադրելը և 387-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է կենսաթոշակառուների և նպաստառուների կանխատեսվող և 9 ամսվա փաստացի մահերի քանակով:

Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն (1225) ծրագիրը իր հերթին բաղկացած է հետևյալ միջոցառումներից.

- Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցությամբ (1225-12001) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 2,401 շահառուի՝ 240,100 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 1,813 շահառուի տրամադրվել է 181,300 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 58,800 հազ. դրամ պակաս

տրամադրելը և 588 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

- Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցությունը (1225-12002) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 1,096,489.8 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 291.5 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 1,096,198.3 հազ. դրամ պակաս տրամադրելը պայմանավորված է ՀՀ կառավարության մի շարք որոշումներով այլ միջոցառումներին փաստացի վերաբաշխված գումարներով:
- Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում) (1225-12003) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 8,212 շահառուի՝ 558,416 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի 7,438 շահառուի տրամադրվել է 505,784 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 52,632 հազ. դրամ պակաս տրամադրելը և 774 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:
- Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց (Կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում) (1225-12004) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 9,969 շահառուի՝ 996,900 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 9,402 շահառուի տրամադրվել 940,189.5 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 56,710.5 հազ. դրամ պակաս տրամադրելը և 567 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

- Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 50-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 11 միջոցառում) (1225-12007) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 450,827 շահառուի՝ 786,219.4 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 450,827 շահառուի տրամադրվել է 786,219.3 հազ. դրամ գումար: Շահառուների անվանացանկ առկա չէ:
- Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 30-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 12 միջոցառում) (1225-12008) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 486,434 շահառուի՝ 1,842,928.8 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 486,434 շահառուի տրամադրվել է 1,842,928.67 հազ. դրամ գումար: Շահառուների անվանացանկ առկա չէ:
- Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխ. շուկ. գոյացած դժվ. արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլ. էներգիայի և խմելու ջրի դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցություն (Կորոն. տնտ. հետ. չեզոքացման 16 միջ.) (1225-12009) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 714,524 շահառուի՝ 2,145,656.6 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 714,524 շահառուի տրամադրվել է 2,145,656.43 հազ. դրամ գումար: Շահառուների անվանացանկ առկա չէ:
- Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառում) (1225-12010) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 136,837 շահառուի՝ 9,229,339.7 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի 131,894 շահառուի տրամադրվել է 8,968,780.17 հազ. դրամ գումար: Հաշվետու

ժամանակահատվածի պլանավորվածից 260,559.53 հազ. դրամ պակաս տրամադրելը և 4,943 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

- Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառում) (1225-12011) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 199,599 շահառուի՝ 5,289,426.5 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի 179,141 շահառուի տրամադրվել է 4,747,227.89 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 542,198.61 հազ. դրամ պակաս տրամադրելը և 20,458 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:
- Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած սոցիալապես անապահով ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներեքերորդ միջոցառում) (1225-12012) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 86,718 շահառուի՝ 1,221,312 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի 85,638 շահառուի տրամադրվել է 1,207,800.4 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 13,511.6 հազ. դրամ պակաս տրամադրելը և 1,080 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:
- Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին, քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառում) (1225-12013) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 52,000 շահառուի՝ 3,536,000 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի 44,781 շահառուի տրամադրվել է 3,045,108

հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 490,892 հազ. դրամ պակաս տրամադրելը և 7,219 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

- Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խմշնդիրների առջև կանգնած ՀՀ քաղաքացիներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներկուերորդ միջոցառում) (1225-12014) ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 17,647 շահառուի՝ 1,200,000 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ինն ամիսների ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի 4,978 շահառուի տրամադրվել է 338,504 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 861,496 հազ. դրամ պակաս տրամադրելը և 12,669 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

ՍԱԾ 29.01.2021 թվականի թիվ 01/12-1/2624-21 գրությամբ ներկայացված «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման» ծրագրերով հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորված գումարների և փաստացի Ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

«Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման» ծրագրերով
Ֆինանսավորված գումարների և փաստացի Ծախսի վերաբերյալ 2020թ. 9 ամիս

Աղյուսակ 2

/դրամ/

Միջոցառում	**Անվանումը**	**Ֆինանսավորում**		**Փաստացի ծախս**
		քանակ	**գումար**	**գումար**
4 միջոցառում	Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցություն	2,114	211,400,000	**181,300,000**
6 միջոցառում	Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում)	8,112	551,616,000	**505,784,000**

7 միջոցառում	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում)	9,781	978,100,000	**940,189,500**
8 միջոցառում	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհայտ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառում)	134,655	9,081,825,528	**8,968,780,168**
9 միջոցառում	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառում)	194,677	5,158,940,500	**4,747,227,885**
11 միջոցառում	Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 50%-ի չափով աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնմեկերորդ միջոցառում)	450,827	786,219,295	**786,219,295**

12 միջոցառում	Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 30%-ի չափով աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներկուերորդ միջոցառում)	486,434	1,842,928,668	**1,842,928,668**
13 միջոցառում	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած սոցիալապես անապահով ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներեքերորդ միջոցառում)	86,718	1,221,308,000	**1,207,800,400**
16 միջոցառում	Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնվեցերորդ միջոցառում)	714,524	2,145,656,433	**2,145,656,433**
20 միջոցառում	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին, քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին և անհայտ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառում)	44,814	3,047,452,000	**3,045,108,000**

22 միջոցառում	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած ՀՀ քաղաքացիներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներկուերորդ միջոցառում)	4,978	338,504,000	**338,504,000**
Ընդամենը		**2,137,634**	**25,363,950,424**	**24,709,498,349**

Ներկայացված տեղեկատվության համաձայն 11-րդ, 12-րդ, 13-րդ և 16-րդ միջոցառումների ֆինանսական հայտերը ստացվել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից և չեն արտացոլվում ՍԱԾ ՏՏ համակարգերով:

Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն 1225 ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների (այդ թվում 13-րդ միջոցառման) մասով անդրադարձ կկատարվի հետագա հաշվեքննությունների ընթացքում:

Գնումների կազմակերպման գործընթացի վերաբերյալ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 2020թ. գնումների պլանից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ կազմակերպված թվով 112 գնման ընթացակարգերի շրջանակներում կնքվել է թվով 131 պայմանագիր ընդհանուր 2,002,146.1 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Տվյալ պայմանագրերի շրջանակներում կատարողականի ընդհանուր գումարը կազմել է 990,136.64 հազ. դրամ, իսկ վճարված գումարը՝ 954,995.76 հազ. դրամ:

5. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Կենսաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակում աշխատանքային կենսաթոշակները ըստ ինն ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 467,461 շահառուի: Ինն ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 449,734 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 17,727-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների 9 ամսվա միջին թվաքանակով:

Ստացված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվեց, որ 9 ամիսների ընթացքում աշխատանքային կենսաթոշակ է վճարվել 470,876 շահառուի (շահառուների թվաքանակը ճշգրտված չէ ետ վերադարձերի մասով):

Առկա է խեղաթյուրում ոչ ֆինանսական ցուցանիշներում նշված շահառուների քանակի և ստացված տեղեկատվության միջև: Մասնավորապես՝ հաշվետվությունում 21,142 շահառու պակաս է արտացոլված:

Մինչդեռ ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 17,727-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է եղել իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների 9 ամսվա միջին թվաքանակով:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություններ.

Աշխատանքային կենսաթոշակների 9 ամսվա ճշտված պլանը կազմել է 467,461 շահառու: 2020թ. հունվար–սեպտեմբեր ամիսների ընթացքում փաստացի ֆինանսավորվել է ամսական միջինը 443,263 շահառու (թվաքանակը ճշգրտվել է ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների մուտքագրումից հետո): Ճշտված պլանի նկատմամբ փաստացի թվաքանակի տարբերությունը կազմում է 467,461-443,263=24,198, որը պայմանավորված է իրավունք ձեռքբերած շահառուների 9 ամսվա միջին թվաքանակով:

Համաձայն Ծառայության տեղեկատվական ապահովման և տեղեկատվական համակարգերի շահագործման վարչության (այսուհետ՝ SS) դիտարկման՝ հաշվեքննության արձանագրությունում ներկայացված է շահառուների անվանական թվաքանակը՝ միջին թվաբանական քանակի փոխարեն:

Համաձայն SS դիտարկման եռամսյակի ընթացքում վճարված 470,876 անվանական շահառուների թվաքանակը հավասարազոր է միջին ամսական 443,414 վճարումների քանակին (=(հունվար շահառու + փետրվար շահառու+. . . + սեպտեմբեր շահառու) 9): Ըստ այդմ ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների՝ 443 263 և SS-ի 443,414 միջին ամսական վճարումների տարբերությունը կազմում է 151, որը պայմանավորված է հետ վերադարձնելով և արտացոլված չէ SS-ի տվյալներում:

Միևնույն ժամանակ, տվյալ ժամանակահատվածում շահառուների միջին ամսական թվաքանակը և անվանական շահառուների թվաքանակը տարբերակելու համար, ևս մեկ անգամ հայտնում ենք, որ Աշխատանքային կենսաթոշակներ միջոցառման մասով պետական բյուջեում որպես արդյունքային չափորոշիչ հանդիսացող կենսաթոշակառուների թիվ բյուջեի կազման ժամանակ հաշվարկվում և հաստատվում է տարեկան միջինացված թվաքանակ: Հետևաբար, համադրելի արդյունքներ ստանալու համար բյուջեի կատարման արդյունքների

հաշվետվությունում ևս պետք է ներկայացվի հաշվետու ժամանակաշրջանի համապատասխան միջին թվաբանական քանակ:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրությամբ ներկայացված խեղաթյուրումները ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշներում տեղ գտած թվաքանակների և մեկնաբանությունների մասով չեն կարող ընդունելի լինել, քանի որ հաշվեքննությամբ արձանագրված 21,142 շահառու չարտացոլելու հանգամանքը գոյություն չունի: Միաժամանակ, հաշվետվությունը ներկայացվում է աճողական ցուցանիշներով և հաշվետվությունում շահառուների անվանական թվաքանակը ներկայացնելու դեպքում մինչև տարեվերջ ցուցանիշն արհեստականորեն աճելու է:

Միաժամանակ ներկայացվում է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. մայիսի 26-ի թիվ 86-Ա որոշման հիման վրա իրականացվող հաշվեքննության շրջանակում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված 2020թ-ի առաջին ինն ամիսներին ստանալու իրավունք ունեցող գործերի վերաբերյալ քանակային տեղեկատվությունը.

Ցուցակ	**Ցուցակում առկա**	**Ցուցակավորված**	**Վճարված**
հունվար	463,145	449,616	440,948
փետրվար	463,564	449,591	442,000
մարտ	464,408	450,335	443,932
ապրիլ	465,252	453,074	445,654
մայիս	465,063	452,145	446,310
հունիս	465,913	451,922	445,687
հուլիս	464,485	449,093	443,152
օգոստոս	464,317	447,067	441,594
սեպտեմբեր	464,463	445,643	441,147
Ընդամենը	**4,180,610**	**4,048,486**	**3,990,424**

Հաշվեքննվող ժամանակահատվածում վճարվել է ընդամենը 470876 շահառուի աշխատանքային կենսաթոշակ, որից՝

Եռամսյակի ընթացքում	**Քանակ**
1 անգամ վճարված	6,380
2 անգամ վճարված	5,653
3 անգամ վճարված	5,621
4 անգամ վճարված	5,961
5 անգամ վճարված	5,909

6 անգամ վճարված	9,130
7 անգամ վճարված	11,091
8 անգամ վճարված	20,110
9 անգամ վճարված	401,021
Ընդամենը	**470,876**

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի 9 ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների համաձայն 12003 աշխատանքային կենսաթոշակներ միջոցառման վրա կատարվող ծախսը կազմել է 179,019,695.7 հազ.դրամ, իսկ կենսաթոշակառուների թիվ, մարդ նշված է 449734, ըստ ներկայացված բացատրությունների 2020թ. հունվար–սեպտեմբեր ամիսների ընթացքում փաստացի ֆինանսավորվել է ամսական միջինը 443,263 շահառու (թվաքանակը ճշգրտվել է ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների մուտքագրումից հետո):

Ամսական միջինով շահառուների հաշվառումը խեղաթյուրում է իրական պատկերը, քանի որ 179,019,695.7 հազ.դրամ գումարը բաշխվել է ոչ թե ամսական միջինով հաշվարկված 443,263 շահառուի միջև, այլ ըստ անվանացանկի փաստացի բաշխվել է 470,876 շահառուի միջև (շահառուների թվաքանակը ճշգրտված չէ ետ վերադարձերի մասով):

6.ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ աշատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությանը առաջարկվում է, համապատասխան ժամանակահատվածում շահառուների իրական թիվը արտացոլելու նպատակով՝ բյուջեի կատարման արդյունքային հաշվետվությունում ներկայացնել տվյալ ժամանակահատվածի փաստացի կատարված ծախսի փաստացի ստացված կենսաթոշակառուների թիվը, այլ ոչ թե ամսական միջինը: